ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍԱԹԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ» ԱՁ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին (այսուհետ՝ ԱՁ) (ՀՎՀՀ 70984127) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Վարչապետի աշխատակազմի կարիքների համար քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ն:

«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 16.11.2023թ. կայացած նիստի N 05 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է աճուրդի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին, ինչպես նաև աճուրդի 1-55-րդ, 60-69-րդ և 71-79-րդ չափաբաժինների մասով հաստատել և հրապարակել պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ս.թ. դեկտեմբերի 8-ին կայացած նիստի N 06 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով իրականացվող գնման գործընթացի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ն: Նույն թվականի նոյեմբերի 30-ին «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագրի

նախագիծը, սակայն «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և ստորագրված պայմանագիրը չի կցել համակարգ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, հիմք ընդունելով օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին զրկել պայմանագիրը կնքելու իրավունքից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է նաև՝ «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի (պայմանագիր չի կնքվում) համաձայն, հաստատել գնման ընթացակարգը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել:

Միաժամանակ, հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը՝ Հանձնաժողովը որոշել է առաջարկել «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

08.12.2023թ. www.gnumner.am կայքում պատվիրատուն հրապարակել է «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ***օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը*** կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ***ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, ***եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը

հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերը շարադրված իրավանորմերը և փաստացի հանգամանքները՝ Պատվիրատուն արձանագրում է, որ «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ն՝ ճանաչվելով «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից, սահմանված ժամկետում չի ներկայացրել իր կողմից ստորագրած պայմանագիրը և դրանով իսկ ***զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից***:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «Սաթինե Սուքիասյան» ԱՁ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ